ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԱԶԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ ՍԱՇԱՅԻ

ՏԱՅՔԸ IV Դ. - XI Դ. ՍԿԻԶԲ
(պատմաաշխարհագրական քննություն)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շահնազարյան Ա.Ի.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Եղիազարյան Ա.Ս.

պատմական գիտությունների թեկնածու
Ակոպով Ա.Ա.

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. հոկտեմբերի 22-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան, պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. սեպտեմբերի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մուրադյան Հ.Ղ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Տայքը, կիսելով պատմական Մեծ Հայքի բազմաթիվ նահանգների ու երկրամասերի ճակատագիրը, այժմ գտնվում է ներկայիս Թուրքիայի Հանրապետության կազմում՝ արժանանալով այն նույն ճակատագրին՝ ինչ մյուսները. հայ ժողովրդի բնաջնջում, բնակավայրերի ավերում և անվանափոխում, հոգևոր ու մշակութային արժեքների ոչնչացում և յուրացում, հայկական հետքերի խաթարում: Սակայն, Տայքի խեղաթյուրումն ու հայկականության վերացումը սկիզբ է առել

դեռևս զարգացած միջնադարում՝ վրացիների կողմից: Հայկական այդ երկրամասը և հարևան Գուգարք նահանգի Կղարջք գավառը դարձան Բագրատունիների այն ճյուղի բնօրրանը, որտեղից ծնունդ առան և զարգացած միջնադարում հզոր ու կենտրոնացված թագավորություն ստեղծեցին վրաց Բագրատունիները: Այն գոյատևեց մինչև XIX դ. սկիզբը: Միայն այս հանգամանքն արդեն իսկ բավարար է հասկանալու համար դրացի վրաց ժողովրդի կյանքում Տայքի խաղացած մեծ դերը:

Ելնելով այդ երկրամասում քաղկեդոնականության տարածման ու վրաց եկեղեցու գերակայության, տեղի հոգևոր կյանքում վրացերեն գիր ու գրականության օգտագործման, բնակչության շրջանում վրաց տարրի ստվարացման, աղբյուրների կողմից տարածքին ու բնակիչներին վրացի կամ «Վրաց երկիր» կոչելու հանգամանքներից, դեռևս միջնադարից սկսած վրաց իրականության մեջ փորձ է արվում Տայքը, հարևան որոշ գավառների հետ, ներկայացնել որպես վրացական պատմական երկրամաս: Ավելին, վրացի հետազոտողները ժխտում են հայության գոյությունն ու դերն այդ տարածքներում: Սակայն նրանք որքան էլ փորձեն Տայքը դիտարկել վրացական երկրամաս, որը, իբրև թե, Ք.ա. II դ. գրավվել էր Հայոց արքա Արտաշես Ա-ի (Ք.ա. 189-160) կողմից, իսկ VIII-IX դդ. կրկին վերադարձվել Վրաց պետությանը, այնուամենայնիվ, գոյություն ունեն բազմաթիվ փաստեր ու ապացույցներ, որոնք, հաճախ շրջանցվելով, փաստում են հակառակը: Իսկ դրանց անտեսումը ունի միայն մեկ վկայություն. խուսափել ճշմարտությանն առերեսվելուց:

Հետևաբար, Տայքի պատմության տարբեր ժամանակաշրջանների ուսումնասիրության յուրաքանչյուր փորձ չափազանց կարևոր ու արդիական է:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է քննել ու վեր հանել հայկական պատմական այդ երկրամասի պատմաաշխարհագրական պատկերը, քանզի Տայքը հայկական և օտար միջնադարյան աղբյուրներում հիշվում է զանազան անվանումներով, իսկ նրա կառավարիչները մեծ մասամբ կոչվում են վրացիներ կամ իբերներ: Բացի այդ, հետագա դարաշրջաններում Տայքն օտար աղբյուրներում դիտվում է գերազանցապես իբրև վրացական էթնիկական ու հոգևոր-մշակութային ամբողջություն, ինչի հիմքերն իրականում դրվել են ավելի վաղ:

Հետևաբար, Տայքի «վրացականացման» գործընթացի հիմքերն ու պատճառները հասկանալու համար մեր առջև խնդիր ենք դրել հետազոտել և վեր հանել.

- Տայքը որպես «Աշխարհացոյց»-յան Մեծ Հայքի նահանգ՝ իր գավառների դասավորությամբ, էթնիկ կազմով, լեզվական ու դավանանքային առանձնահատկությամբ:
- Պարզել «Տայք» երկրանվան ծագումը, հայկական ու օտար աղբյուրներում դրա փոփոխություններն ու վերջիններս պատճառները:
- Ուսումնասիրել Տայքում քաղաքական իշխանության ձևավորման հիմքերը:
- Բացահայտել Բագրատունիների վրացական ճյուղի ծագումը և հայկականի հետ արմատական կապը:
- Պարզել Բագրատունիների վրացական ճյուղի առաջացման ստույգ ժամանակը, զբաղեցրած տարածքներն ու իշխանության սահմանները:
- Քննել այդ երկրամասում Կուրապաղատության և թագավորական իշխանության ստեղծումը:
- Ուսումնասիրել Տայքի պատմության հատկապես այնպիսի կարևորագույն մի ժամանակաշրջան, ինչպիսին Դավիթ Կուրապաղատի գահակալման շրջանն է (X դ. երկրորդ կես):

- Պարզել վերջինիս տոհմաբանությունը, լուսաբանել նրա արտաքին ու ներքին քաղաքականությունը և իշխանության «կտակումը» Բյուզանդական կայսրությանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են Տայքի՝ IV դ. մինչև XI դ. սկիզբն ընկած ժամանակահատվածի պատմաաշխարհագրական քննությունը: Դա պայմանավորված է նրանով, որ վերոնշյալ խնդիրների ուսումնասիրությունը պահանջում է անդրադառնել այդ երկրամասում քրիստոնեության տարածմանը, ապա քաղկեդոնականության ներթափանցմանն ու արմատավորմանը, ինչի հետևանքով էլ Տայքն աստիճանաբար դարձավ «վրացական», ինչպես նաև իշխանությունների ձևավորմանն ու գոյությանը մինչ այնտեղ Բագրատունիների հաստատումը, որոնք փաստում են Տայքի հայկական լինելը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը գրվել է հայ և օտար բազմաթիվ աղբյուրների պատմահամեմատական, գիտական անաչառ քննության և վերլուծության մեթոդաբանությամբ: Կատարվել են ձեռքի տակ եղած փաստերի վերլուծություն, դրանց պատմահամեմատական քննություն, տեղեկությունների ու վկայությունների համադրում և ճշգրտում: Նախկինում կատարված հետազոտությունների ու ուսումնասիրությունների նկատմամբ ևս ցուցաբերվել է քննական մոտեցում: Փորձ է արվել նոր փաստերի վերհանմամբ կամ հների նորովի պարզաբանմամբ համադիր քննել տարաբնույթ, երբեմն նաև իրարամերժ տեղեկություններն ու տեսակետները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի կողմից: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հրատարակած 9 հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ներկա հետազոտությունն իր ժամանակագրական ընդգրկմամբ և քննվող հարցերի ամբողջությամբ իրականացվել է առաջին անգամ: Տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա լուսաբանվել են Տայքի խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմաաշխարհագրությանը վերաբերող այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են երկրամասում էթնո-դավանանքային փոփոխությունները, այնտեղ քաղկեդոնականության տարածումն ու արմատավորվելը և դրանց հետևանքները: Աշխատանքի գիտական արժևորման տեսանկյունից հատկապես կարևոր է նաև այն փաստը, որ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում Վրաստանի Ձեռագրերի Ազգային կենտրոնի արխիվային անտիպ ֆոնդում պահվող փաստաթղթեր, որոնցով ապացուցվում է, որ մինչև XX դ. սկիզբը Տայքում դեռևս ապրում էին հայախոս հայեր և գոյություն ունեին հայկական համայնքներ: Ատենախոսության գիտական նորույթներից է նաև Բագրատունիների վրացական ճյուղի ծագմանն քննությունը հատկապես վրացական աղբյուրների հիման վրա, որոնցով էլ հաստատվում է նրանց իրական, այն է՝ հայկական ծագումը, ինչն անտեսվում է վրացի գիտնականների կողմից:

Աշխատանքը կարող է օգտակար լինել վաղ և զարգացած միջնադարի պատմությամբ ու աշխարհագրությամբ, ինչպես նաև Բագրատունիների վրացական ճյուղի պատմությամբ հետաքրքրվողների և ուսումնասիրողների համար: Հետազոտության արդյունքները նաև կարող են օգտակար լինել այդ երկրամասի հետագա դարաշրջանների պատմության, ժողովրդագրության և պատմական աշխարհագրության ուսումնասիրման համար:

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՆՔԸ: Թեմայի ուսումնասիրման համար առաջնային նշանակություն ունեն միջնադարյան հայկական և վրացական աղբյուրները, որոնք լույս են սփռում Տայքի պատմաաշխարհագրական, քաղաքական, ինչպես նաև էթնո-դավանանքային խնդիրների մութ կողմերի վրա: Տայքը որպես Մեծ Հայքի վարչական և աշխարհագրական միավոր, ներկայացված է հայկական այնպիսի արժեքավոր ու եզակի մի աղբյուրում, ինչպիսին է «Աշխարհացոյց»-ը՝ իր ընդարձակ և համառոտ խմբագրություններով[1]: Այդ կոթողային երկի շնորհիվ է, որ հնարավորություն է ստեղծվում ծանոթանալու խնդրո առարկա նահանգի գավառներին, դրանց անվանումներին, տեղադրությանն ու սահմաններին:

Տայքի որոշ բնակավայրերի վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել մի շարք հայ պատմիչների երկերում: Դրանց համադրությունը թույլ է տալիս որոշակիորեն ուրվագծելու նահանգի բնաաշխարհագրական պատկերը, գնահատել ռազմաստրատեգիական նշանակությունը, ճշտել ամրոցների ու բերդերի տեղադրությունը և այլն: Այդ աղբյուրներից են Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու երկերը[2], որոնց շնորհիվ հնարավորություն է ստեղծվում վստահաբար փաստելու Արշակունիների արքայատոհմի գահակալման և դրանից հետո՝ նախարարական համակարգի գոյության շրջանում, Տայքը հայ նշանավոր տներից մեկին՝ Մամիկոնյաններին պատկանելը:

Տայքի հոգևոր դասի վերաբերյալ նյութեր կարելի է քաղել ոչ միայն պատմիչների երկերից, այլև չափազանց վստահելի ու արժեքավոր վավերագրերի ժողովածու «Գիրք թղթոց»-ից[3]: Այդ վավերագրերի քննությամբ կարելի է արձանագրել Տայքի հոգևոր առաջնորդների տեղն ու դիրքը Հայ առաքելական եկեղեցու աստիճանակարգում, ինչպես նաև մինչև IX-X դդ. նրանց՝ անբաժանելի լինելը: «Գիրք թղթոց»-ի տեղեկությունները լրացնում են նաև Ուխտանեսի[4], Սեբեոսի[5], Մովսես Կաղանկատվացու[6] և այլոց աշխատությունները, թեև նրանք հաճախ սահմանափակվում են եկեղեցական ժողովներին մասնակցած Տայքի հոգևոր հովվի միայն անվան հիշատակումով կամ էլ երկրամասի վերաբերյալ հակիրճ հաղորդումներով:

Այդ տեսանկյունից բացառություն չէ Ղևոնդը, որի երկը[7], թեև շատ համառոտ անդրադարձ ունի Տայքին, սակայն լույս է սփռում այնպիսի կարևորագույն հարցի վրա, ինչպիսին է Արմինիա ոստիկանության գոյության ընթացքում հայ-վրացական սահմանաբաժանումը: Պատմիչի տեղեկությունների արժեքներից է նաև հեղինակի՝ հայ-արաբական հակամարտությունների ու դրանց հետևանքների ականատես լինելը:

Հայոց կաթողիկոս ու պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու երկը[8] կարևորվում է իր ապրած ժամանակաշրջանի իրադարձությունների մասին մանրամասն ու եզակի

---

[1]«Աշխարհացոյց» Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, Վենետիկ, 1881: Армянская география VII века по Р.Х. (приписывавшаяся Моисею Хоренскому), текст и перевод с присовокуплением карт и объяснительных примечаний издал К.П. Патканов, СПб., 1877:

[2] Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Եր., 1987: Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Եր., 1957: Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Եր., 1991: Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904:

[3] «Գիրք թղթոց», Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901:

[4] Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ. դար, Եր., 2011:

[5] Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1979:

[6] Մովսէս Կաղանկատուացին եւ իր «Աղուանից աշխարհի պատմութիւն»-ը, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ. դար, Եր., 2011:

[7] Պատմաբանութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով աւրինակաւ տիրեցին տիեզերայ, եւս առաւել թէ Հայոց ազգիս, Մատենագիրք Հայոց, հ. Զ, Ը. դար, Անթիլիաս-Լիբանան, 2007:

[8] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

հաղորդումներով: Հովհաննես Դրասխանակերտցին է վկայում Բագրատունիների վրացական ճյուղի ներկայացուցիչ Ատրներսեհ Բագրատունու՝ արքայական թագի արժանանալու իրողությունը: Նա նկարագրում է Հայոց արքա Սմբատ Ա-ի (890-914) և Ատրներսեհի (899-923) փոխհարաբերությունները՝ վերջինիս կոչելով «Վրաց իշխան», «Վրաց կուրապաղատ», ապա նաև՝ «Վրաց թագավոր»՝ չմեկնաբանելով այդ կոչումները: Փոխարենը վկայում է, որ Տայքն Ատրներսեհի տիրույթն էր, և որ նա ընդունում էր Հայոց արքայի գերիշխանությունը: Դրասխանակերտցու տեղեկություններն արժեքավոր ու եզակի են ոչ միայն հայոց, այլև վրաց պատմության ուսումնասիրման համար: Թեև, նրա վկայությունները հնարավորություն են տալիս լուսաբանելու երկու երկրների պատմության բազմաթիվ մութ կողմեր, սակայն հարուցում են նաև նոր հարցեր ու դժվարություններ՝ հատկապես երբ նա Տայքի կառավարչին բնորոշում է «վրաց» եզրույթով: Ուստի պատմիչի հաղորդումներին պետք է անդրադառնալ վերապահումով և նման դեպքերում հիմնավոր պարզաբանումներ տալ:

Տայքի X դ. երկրորդ կեսի պատմության և Դավիթ Կուրապաղատի գործունեության վերաբերյալ հարուստ և արժեքավոր տեղեկություններ է պարունակում Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի աշխատությունը[9]: Ասողիկն այդ ժամանակաշրջանի հեղինակ է, ուստի նրա տեղեկությունները տրված են ականատեսի վկայությամբ: Նա, ինչպես նաև՝ Արիստակես Լաստիվերտցին[10] ու Մատթեոս Ուռհայեցին[11], անդրադառնում են նաև Դավիթ Կուրապաղատի մահվան հանգամանքներին:

VIII-IX դդ. Բագրատունիների տոհմի ճյուղագրության մասին բացառիկ ու արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Վարդան վարդապետի աշխատությունում[12]: Հեղինակը, հավանաբար, իր վկայությունները քաղել է Շապուհ Բագրատունու կորած երկից, ուստի դրանք բավականին հավաստի են ու վստահելի: Նրա արժեքավոր տեղեկությունների շնորհիվ է, որ պարզվում են Բագրատունիների վրացական ճյուղի սկզբնավորման ճշգրիտ հիմքերը:

Ատենախոսությունը շարադրելիս օգտվել ենք նաև Թովմա Արծրունու, Կիրակոս Գանձակեցու, Թովմա Մեծոփեցու, Հակոբ Կարնեցու և այլոց աշխատություններից[13]: Հատկապես Հակոբ Կարնեցու երկի շնորհիվ կարելի է շատ հստակ բնորոշել «վրաց» եզրույթի իմաստներն ու նշանակությունը:

Աշխատանքը հնարավոր չէր լինի իրականացնել առանց վրացական աղբյուրների: Օգտագործել ենք դրանց բնագրային հրատարակությունները, երբեմն էլ թարգմանությունները, որոնցից գլխավորը Ս. Կաուխչաշվիլու կողմից «Քարթլիի Մատեան»-ի[14]՝ առաջին և երկրորդ հատորներով հրատարակությունն է, որը 2008 թ. վերահրատարակվել է մեկ հատորով[15]: Իսկ 2008 թ. լույս տեսավ դրա «Картлис Цховреба»[16] վերնագրով ռուսերեն թարգմանությունը, որը սակայն «Մատյանի» հեղինակների մինչ այդ առանձին հրատարակված երկերի նույնական հրատարակումն է, առանց հավելումների: Այդ առանձին հրատարակությունները նույնպես տեղ են գտել մեր

[9] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:
[10] Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի, Եր., 1963:
[11] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Բ. տպագրութիւն, Վաղարշապատ, 1898:
[12] Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, ի Վենետիկ, 1862:
[13] Թովմաս Մեծոփեցի, Պատմագրություն, Աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Եր., 1999: Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Դարբինյան-Մելիքյանի, Եր., 2006: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, Յակովբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց Յիշատակարան ԺԷ. դարու, Կ. Կոստանեանց, Վաղարշապատ, 1903:
[14] ქართლის ცხოვრება, ტექსტი დადგენილი ყველა ძირითადი ხელნაწერის მიხედვით ს. ყაუხჩიშვილის მიერ, ტომი I, თბილისი, 1955.
[15] ქართლის ცხოვრება, მთავარი რედაქტორი რ. მეტრეველი, თბილისი, 2008.
[16] Картлис Цховреба, История Грузии, главный редактор Р. Метревели, Тб., 2008.

ուսումնասիրած աղբյուրների շարքում: Դրանք են՝ Դավթի որդի Սմբատի[17], Լեոնտի Մրովելու «Վրաց Տարեգիրք»-ը[18], «Վրաց Դարձը»[19], ինչպես նաև արքայազն Վախուշտի[20] երկերը: Վրացական աղբյուրների շարքում բացառիկ է Ջուանշերի՝ «Վախթանգ Գորգասալի կյանքը»[21] երկը, որի նշանակությունը գնահատվել և հայերեն է թարգմանվել դեռևս միջնադարում: «Վրաց Տարեգիրք»-ը ևս հնում թարգմանվել է հայերեն, որի հայերեն և զուգադիր վրացերեն բնագիրը հրատարակել է Ի. Աբուլաձեն[22]: Վրացական աղբյուրների ուսումնասիրման խնդրում բացառիկ և ուրույն տեղ ունի ֆրանսիացի գիտնական Մ. Բրոսսեն, որի «Քարթլի Մատյան»-ի առաջին ամբողջական թարգմանությունն ու հրատարակությունը[23] ցայսօր էլ չի կորցրել արժեքն ու նշանակությունը, հատկապես իր ծանոթագրություններով: Վրացական որոշ աղբյուրներ հատվածական կամ ամբողջական հայերեն են թարգմանել և ծանոթագրել մասնավորապես Լ. Մելիքսեթ-Բեկը[24], Վ. Մարտիրոսյանն ու Հ. Մկրտումյանը[25]:

Վրացական աղբյուրների ուսումնասիրման, դրանց ձեռագրերի հայտնաբերման և լույս ընծայման մեջ մեծ է Ն. Մառի վաստակը, որի շնորհիվ գիտական հանրությունը ծանոթացավ այնպիսի արժեքավոր աղբյուրի, ինչպիսին է «Գրիգոր Խարձթեցու վարքը»[26]: «Վարք»-ի և՛ հեղինակը և՛ հերոսն անմիջական ու գործուն մասնակցություն ունեն Տայքի և, հատկապես, հարևան Կղարջք գավառի ու շրջակայքի քաղկեդոնականացման, այնտեղ եկեղեցիների կառուցման գործում: Գրիգոր Խանձթեցին եղել է Աշոտ I Կուրապաղատի ու նրա որդիների ժամանակակիցն ու մտերիմը, իսկ նրա վարքագիր Գեորգի Մերչուլը՝ ապրելով Խանձթեցուց մոտ իննսուն տարի անց, գրի է առել նրա գործունեության մասին եզակի վկայություններ՝ դրանով իսկ չափազանց արժևորելով այդ «Վարքը»: Ն. Մառի բազում աշխատություններ նվիրված են նաև հայ-վրացական լեզվական և դավանաբանական խնդիրներին, որոնց մեջ հատկապես արժեքավոր է «Аркаун, монгольское название христиан»[27] աշխատությունը, որի հայերեն և ֆրանսերեն թարգմանությունը[28] լույս տեսավ վերջերս:

Տայք երկրամասի բնակչության, նրա սահմանների, տեղի ու դերի վերաբերյալ արժեքավոր են նաև հունա-հռոմեական աղբյուրները, որոնցից է՝ Քսենոփոնի «Անաբասիս»[29] աշխատությունը: Աղբյուրներում հենց նրա շնորհիվ է շրջանառության մեջ

---

[17] სუმბატ დავითის ძის ქრონიკა ტაო–კლარჯეთის ბაგრატიონთა შესახებ, გამოცემა მესამე, ტექსტი გამოსცა ვრცელი შესავლით, შენიშვნებით და ორი გენეალოგიური ტაბულით საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის ნამდვილმა წევრმა ე. თაყაიშვილმა, თბილისი, 1949. Сумбат Давитис-дзе, История и повествование о Багратионах, перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе, Памятники грузинской исторической литературы, III, Тб., 1979.

[18] Матиане Картлиса, перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе, Тб., 1976, Летопись Картли, перевод, введение и примечания Г. В. Цулая, Памятники грузинской исторической литературы, IV, Тб., 1982.

[19] Такайшвили Е., Источники Грузинских летописей, три хроники, Тифлис, 1900.

[20] Вахушти Багратиони, История царства грузинского, перевел, снабдил предисловием, словарями и указателем Н. Т. Накашидзе, Тб., 1976.

[21] Джуаншер Джуаншериани, Жизнь Вахтанга Горгасала, перевод, введение и примечания Г. В. Цулая, Памятники грузинской исторической литературы, VI, Тб., 1986: Համառօտ Պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի, Վենետիկ, 1884:

[22] «Քարթլիս Ցխովրեբայի» կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը ուսումնասիրությամբ և բառգրքով լույս ընծայեց Իլիա Աբուլաձեն, Թբիլիսի, 1953:

[23] Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIXe siècle par M. Brosset, 1re partie, S.-Pétersbourg, 1849.

[24] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթություններով յեվ հավելվածներով, հ. Ա (Ե-ԺԲ դար), Եր., 1934:

[25] «Քարթլիի մատյան», թարգմանությունը՝ Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, մաս Ա, Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, թիվ 9:

[26] Георгий Мерчул, Житие Григория Хандзтийского, перевод Н. Я. Марра (Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. VII), СПб., 1911.

[27] Марр Н., Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах, Кавказский культурный мир и Армения, Ер., 1905.

[28] Մառ Ն., «Արքաուն». Քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ, Եր., 2016:

[29] Քսենոփոն, Անաբասիս, թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970:

դրվել երկրամասի «Տայք» անունը: Հույն հեղինակներից Դիոդորոս Սիկիլիացին[30] ու Ստեփանոս Բյուզանդացին[31] ևս անդրադարձել են «Տայք» երկրանվանը:

Ինչպես Մեծ Հայքի մնացյալ տարածքների ու շրջանների, այնպես էլ Տայքի վերաբերյալ եզակի ու արժեքավոր տեղեկություններ կարելի գտնել հույն աշխարհագիրներ Ստրաբոնի[32] ու Կլավդիոս Պտղոմեոսի[33] աշխատություններում: Դրանց շնորհիվ կարելի է որոշակի պատկերացում կազմել Տայքի էթնիկական պատկերի մասին նախաքրիստոնեական ժամանակաշրջանից սկսած, և քարտեզագրել ու ճշգրտել որոշ գավառների տեղն ու դիրքը:

Ատենախոսության շարադրմանը մեծապես նպաստել են բյուզանդական աղբյուրները, որոնք լույս են սփռում ոչ միայն քննվող ժամանակաշրջանի քաղաքական անցքերի վրա, այլև թույլ են տալիս հասկանալու և պարզաբանելու քաղկեդոնականության դերը «Տայք» երկրանվան կիրառման ու փոփոխման հարցում: Այդ աղբյուրների հեղինակներից են Պրոկոպիոս Կեսարացին[34] և պատմիչ-կայսր Կոստանդին Ծիրանածինը (913-959)[35], որոնց աշխատությունները մեծ նշանակություն ունեն հայ-բյուզանդական հարաբերությունների մի շարք խնդիրներ ուսումնասիրելու առումով: Ծիրանածինը հատկապես արժեքավոր տեղեկություններ է հայտնում Կուրապաղատության պատմության վերաբերյալ: Հակականչ և վրացական աղբյուրների տեղեկությունների հետ դրանց համադրումը հնարավորություն է տալիս կատարելու մի շարք համոզիչ եզրահանգումներ:

Բյուզանդական աղբյուրների շարքում մեծ է նաև ժամանակագիր Հովհաննես Սկիլիցեսի և նրա Շարունակողի աշխատության[36] արժեքը: Այն Տայքի կուրապաղատ Դավթի և Բյուզանդիայի կայսր Վասիլ II-ի (976-1025) փոխհարաբերությունների ուսումնասիրման կարևոր աղբյուր է: Բյուզանդական աղբյուրներից արժեքավոր են նաև Կեկավմենոսի, Միքայել Պսելլոսի, Միքայել Ատտալիատեսի աշխատությունները[37]: Տայքի պատմության ուսումնասիրման համար բացառիկ արժեք ունեն բյուզանդական այլ աղբյուրներ ևս՝ «Եվստաթիոս Բոյիլասի կտակը»[38] և, հատկապես, հայ-քաղկեդոնական Անանուն հեղինակի եզակի մի երկ՝ «Narratio de rebus Armeniae»[39], որոնց տեղեկությունների համադրումն օգնում են բացահայտելու քաղկեդոնականության տարածվածության մակարդակը Հայաստանում, հատկապես Տայքում և Կղարջքում, դրան զուգահեռ՝ փաստելով Հայ առաքելական եկեղեցու հետևորդների համայքների հետագա գոյությունն այդ տարածքներում:

Բյուզանդական աղբյուրների հայերեն թարգմանության և հրատարակության խնդրում անուրանալի է ակադեմիկոս Հ. Բարթիկյանի դերը, որի գիտական վաստակը

---

[30] Դիոդորոս Սիկիլիացի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 14, Հին հունական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Եր., 1985:

[31] Stephani Byzantii, Ethnicorvm, quae svpersvnt ex recensione Avgvsti Meinekii, t. I, Berolini, 1849.

[32] The Geography of Strabo, with an English translation by Horace Leonard Jones, t. 5, London, Cambridge, Massachusetts, 1961.

[33] Կլավդիոս Պտղոմեոս, Ասիայի III քարտեզը, Հայաստանի պատմության ատլաս, մաս Ա, հեղինակ՝ Բ. Հարությունյան, Եր., 2004:

[34] Պրոկոպիոս Կեսարացի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Եր., 1967:

[35] Կոստանդին Ծիրանածին, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Եր., 1970:

[36] Հովհաննես Սկիլիցես, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Եր., 1979:

[37] Кекавмен, ,,Советы и рассказы", Введение, перевод и коментарий Г. Литаврина, СПб., 2003, Michael Psellos, Chronographie ou Histoire d'un siècle de Byzance (976-1077), t. I, Paris, 1967, Michaelis Attaliotae Historia, recognovit Immanuel Bekkerus, Bonnae, 1853.

[38] Բարթիկյան Հ., Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Եր., 2002:

[39] Garitte G., La Narratio de rebus Armeniae, Édition critique et commentaire. Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 132, Subsidia t. 4, Louvain, Imprimerie Orientaliste L. Durbecq, 1952.

չսահմանափակվեց միայն այդ աղբյուրների հրատարակմամբ: Նա ամենայն մանրամասնությամբ ծանոթագրել և հնարավորինս բացատրել է յուրաքանչյուր թեմայի ու նյութի վերաբերյալ տեղեկությունները՝ լինի դա՝ տեղանուն, անձնանուն, բյուզանդական որևէ տերմին, ազնվականական և ռազմական կոչում, թե անգամ՝ հասարակական կյանքին, կենցաղին ու սովորույթներին առնչվող բառ և այլն: Հ. Բարթիկյանի անգնահատելի աշխատանքները ներառում են հայ-բյուզանդական հարաբերությունների բազում և ամենատարբեր ժամանակաշրջանների ու ոլորտների վերաբերյալ նյութեր, որոնք ամփոփված են նրա եռհատոր «Հայ-Բյուզանդական հետազոտություններ»[40] խորագրով հոդվածների ժողովածուում:

Մեզ հետաքրքրող հիմնախնդրի որոշ հարցերի լուսաբանմանը մեծապես օգնել են նաև արաբական աղբյուրները: Դրանցից հատկապես արժեքավոր են Բալազուրիի, Իբն Խորդադբեհի, Իբն ալ-Ֆակիհի, Կուդամա իբն Ջաաֆարի, Իբն Ռուստայի աշխատությունները, որոնց թարգմանության, ծանոթագրման և հրատարակման գործում մեծ է Ա. Տեր-Ղևոնդյանի վաստակը[41]: Արժեքավոր են նաև նրա հայ-արաբական հարաբերությունների պատմությանը վերաբերող աշխատությունները[42]: Արաբական աղբյուրների հեղինակների մի մասը եղել է Հայաստանում և լսել ու գրի առել բազմաթիվ տեղեկություններ, որոնք այլուր չեն հանդիպում: Եզակի և արժեքավոր են նաև Յահյա Անտիոքացու[43] տեղեկությունները:

Ատենախոսության թեմային առնչվող ուսումնասիրությունների շարքում կարևոր և ուրույն տեղ ունեն Ս. Երեմյանի աշխատությունները[44], որոնցից հատկապես պետք է առանձնացնել «Աշխարհացոյց»-ի գիտաքննական հրատարակությունը՝ օժտված համապատասխան քարտեզով:

Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրման ոլորտում Ս. Երեմյանից ոչ պակաս վաստակ ունի Բ. Հարությունյանը: Նա մանրազնին քննել է Մեծ Հայքի տարբեր նահանգների ու բդեշխությունների սահմանները, գավառների հին ու նոր անվանումները և տեղադրությունները: Նրա աշխատանքների թվում պետք է առանձնացնել «Մեծ Հայքի վարչաքաղաքական համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի»[45] ուսումնասիրությունը, որը նախատեսված էր հրատարակել երկու մասով: Առաջին մասը, որը ներառում է Մեծ Հայքի արևմտյան և հարավային ութ նահանգները, արժեքավոր և բացառիկ է՝ հեղինակի կատարած մանրազնին քննության, նոր ու արժեքավոր բացահայտումներով: Աշխատանքի երկրորդ մասը նվիրված էր լինելու մնացյալ յոթ նահանգներին, այդ թվում՝ Տայքին, ինչը հեղինակի հիվանդության և վաղաժամ մահվան պատճառով չիրագործվեց: Այն առավել օգտակար կլիներ մեր թեմայի ուսումնասիրման տեսանկյունից:

---

[40] Բարթիկյան Հ., «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, Եր., 2002, նույնի՝ հ. Բ, Եր., 2002:

[41] Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Արաբական աղբյուրներ, Գ, ներածությունը և բնագրերից թարգմանությունները պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005:

[42] Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, Ер., 1977, Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանը VI-VIII դարերում, Եր., 1996, նույնի՝ «Հոդվածների ժողովածու», Եր., 2003:

[43] Розен В., Император Василий Болгаробойца. Извлечения из Летописи Яхъи Антиохийского. Приложение к XLIV-му тому “Записок” Императорской Академии наук, N 1, СПб., 1883.

[44] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Եր., 1963, նույնի՝ Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Եր., 1961, նույնի՝ Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, «Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», Եր., 1947, թիվ 2:

[45] Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհայացոյց»-ի, Եր., 2001, նույնի՝ «Աշխարհացոյց»-ը և Չորս Հայքերի խնդիրը, Եր., 1997 և այլն:

Տայքի գավառների ու բնակավայրերի տեղադրության և նախարարական համակարգի շրջանում Տայքի պատմության ուսումնասիրման առումով արժեքավոր են նաև մեծագույն հայագետներից մեկի՝ Ն. Ադոնցի ուսումնասիրությունները[46]: Մեզ հետաքրքրող հարցերին նախկինում բազմիցս անդրադարձած Ն. Ադոնցը քննել է հատկապես Բագրատունիների տոհմի տարբեր ճյուղերի, այդ թվում՝ վրաց Բագրատունիների, ծագման ու զարգացման հարցերը և ներկայացրել իր եզրակացությունները: Թեև դրանցում կան որոշ անճշտություններ ու բացթողումներ, սակայն դրանք բնավ չեն նսեմացնում վաստակաշատ գիտնականի աշխատությունների արժեքը: Բագրատունիների պատմությանն ու տոհմաբանությանն է անդրադարձել նաև Յ. Մարկվարտը[47], որի աշխատությունը ևս զերծ չէ թերություններից, բայց մնում է այդ շարքի ուսումնասիրությունների բարձունքներում:

Տայքի վերաբերյալ մեծ արժեք ունեցող աշխատությունների շարքում կարելի է առանձնացնել նաև Ատրպետի «Ճորոխի ավազանը»[48] աշխատությունը, որում տրված է Տայքի բնակավայրերի նկարագիրը:

Տայքի մասին հարուստ տեղեկություններ կարելի է քաղել նաև Մխիթարյան հայրեր Մ. Չամչյանցի[49], Ղ. Ինճիճյանի[50], Ղ. Ալիշանի[51], Ն. Սարգսյանի[52], Ն. Ակինյանի[53], Հ. Տաշյանի[54], Մ. Ճանաշյանի[55] և այլոց աշխատություններից:

Վրացի գիտնականները ևս անմասն չեն մնացել Տայքի պատմության ուսումնասիրության հարցում: Ընդ որում նրանց տեսակետներում գերիշխողը Տայքն ու շրջակա գավառներն անվերապահորեն վրացական երկրամասեր դիտարկվելն է: Այդ հեղինակներից են Ի. Ջավախիշվիլին, որի «Վրաց ժողովրդի պատմություն»[56] աշխատության երկրորդ հատորում մանրամասն քննված են Տայքի ու շրջակայքի մի շարք բնաաշխարհագրական հարցեր, ինչպես նաև խոսվում է Բագրատունիների վրացական ճյուղի ներկայացուցիչների և, հատկապես, Դավիթ Կուրապաղատի մասին: Վրացի գիտնականներից Ս. Ջանաշիան և Մ. Լորդքիփանիձեն[57] ևս զբաղվել են Տայքի պատմության մի շարք խնդիրների, գլխավորապես Կուրապաղատության արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերի քննությամբ: Է. Ցագարեիշվիլին նույնպես անդրադարձել է Բագրատունիների վրացական ճյուղին, ինչպես նաև հայկական աղբյուրներում հանդիպող «վրաց» տերմինի նշանակությանը[58]: Վրացի հեղինակներից

---

[46] Адонц Н., Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, Ադոնց Ն., Երկեր, հ. Ա, Եր., 2006, նույնի՝ Երկեր, հ. Դ, Եր., 2009, նույնի՝ Երկեր, հ. Ե, Եր., 2012 և այլն:

[47] Marquart J., Osteuropäische und Ostasiatische Streifrüge, Leipzig, 1903: Մարկուարտ Յ., Վրական Բագրատունեաց ծագումը, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1915:

[48] Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929:

[49] Միքայել վարդապէտ Չամչեանց, Պատմութիւն Հայոց, ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Բ, Վենէտիկ, 1785:

[50] Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, հատոր Ա, Վէնէտիկ, 1806: Նույնի՝ Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Վէնէտիկ, 1822:

[51] Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855: Նույնի՝ Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց, տեղագրեաց Հ. Ղ. Ալիշան, Վենետիկ, 1890: Նույնի՝ Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1901 և այլն:

[52] Սարգիսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

[53] Ակինեան Ն., Զրոյց Պղնձէ Քաղաքի, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1958, թիվ 1-4: Նույնի՝ Կիւրոն կաթողիկոս Վրաց, պատմութիւն հայ-վրական յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ, պատմական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1910:

[54] Տաշեան Հ. Յ., Տայք, դրացիք եւ Խոտորջուր, Պատմական-տեղագրական ուսումնասիրութիւն, հատոր Ա, Վիեննա, 1973, նույնի՝ Հայ բնակչութիւնը Սեւ Ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921:

[55] Ճանաշեան Մ., Դաւիթ Կիւրապաղատ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ, 1972:

[56] ჯავახიშვილი ივ., ქართველი ერის ისტორია, წიგნი მეორე, თბილისი, 1965.

[57] Джанашиа С., Об одном примере искажения исторической правды. По поводу книги Н. Токарского “Архитектура древней Армении”, Тб., 1947, Лордкипанидзе М., Из истории грузино-византийских взаимоотношений на грании X-XI вв., საქართველოს ფეოდალური ხანის ისტორიის საკითხები, II, თბილისი, 1972.

[58] Цагарейшвили Е. Термины обозначающие халкидонитское вероисповедание и халкидонитов в армянских письменных источниках. Некоторые вопросы истории Грузии в армянской историографии, Сборник статьи, научный редактор Д. Мусхелишвили, Тб., 2009, նույնի՝ Культурно-конфессиональное значение термина «враци» («грузин») в армянских письменных источниках, Сборник статьи, Тб.,

մեծ է հատկապես Է. Թաղաիշվիլու[59] վաստակը: Նա հայտնաբերել, մշակել ու ծանոթագրություններով հրատարակել է վրացական աղբյուրների գիտաքննական բնագրեր: Վրաստանի Ձեռագրերի Ազգային կենտրոնի արխիվային առանձին ֆոնդում պահվում է Է. Թաղաիշվիլու անտիպ աշխատությունների հսկայածավալ հավաքածուն, որի մի բացառիկ ու եզակի փաստաթղթի[60] ծանոթացել ենք տեղում: Այն պարունակում է 1914-1918 թթ. դրությամբ Տայքի որոշ բնակավայրերի ցանկը՝ գյուղերի անվանումներով, տների կամ ծխերի քանակը, բնակչության թվաքանակը, ըստ ծխերի: Այնտեղ առկա են հայկական գյուղերի անունները, և Հայոց Մեծ Եղեռնից առաջ ու հետո դրանցում հայկական ընտանիքների ու անդամների թվաքանակը: Այդ փաստաթուղթը վկայում է Տայքում հայախոս հայության դարավոր գոյությունն ու պահպանումը մինչև XX դ. սկիզբ:

Տայքի կուրապաղատության պատմության մի շարք խնդիրների ուսումնասիրման հարցում կարևորվել են Զ. Անչաբաձեի[61], Կ. Թումանովի[62], Կ. Յուզբաշյանի[63] և այլոց աշխատությունները:

Խորհրդային շրջանում, չնայած որոշ դժվարություններին, լույս են տեսել Տայքի ճարտարապետությանն առնչվող որոշ արժեքավոր հետազոտություններ[64], որոնք ցայսօր չեն կորցրել իրենց գիտական կարևորությունը: Հայաստանի անկախացումից հետո այդ երկրամասի պատմության ուսումնասիրումը նոր թափ է ստացել: Վերջին տարիներին լույս են տեսել մի շարք աշխատություններ, որոնք առնչվում են ոչ միայն երկրամասի ճարտարապետական կոթողներին, այլև՝ հնագույն ասորա-ուրարտական Դայաենի-Դիաուխի անվան ստուգաբանությանը, Տայքի միջնադարյան քաղաքական պատմության որոշ դրվագներին, Բագրատունիների իշխանությանը, ինչպես նաև մեծ հետաքրքրություն ներկայացնող՝ ժողովրդագրությանը[65]: Մինչ այս արված արժեքավոր հետազոտությունները բարձր գնահատելով հանդերձ, փորձել ենք ներկա ատենախոսությամբ ժամանակագրական նման լայն (IV դ.-XI դ. սկիզբ) շրջանակներում ամբողջացնել Տայքի պատմաաշխարհագրությանն առնչվող մի շարք խնդիրների լուսաբանումը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից (համակարգչային 248 էջ) և հավելվածից, որը ներառում է ինը աղյուսակ (տոհմածառեր) և երկու քարտեզ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված են ատենախոսության ստեղծման անհրաժեշտությունը, թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, հետազոտության նպատակն ու խնդիրները, ժամանագրական շրջանակները և տրված է օգտագործված աղբյուրների ու գրականության տեսությունը:

2009, նույնի՝ К вопросу о значении термина «враци азгав» в армянских письменных памятниках, Сборник статьи, Тб., 2009, նույնի՝ К вопросу о значении терминов «Вериа» и «вериаци» в армянских письменных источниках, Сборник статьи, Тб., 2009.

[59] Такайшвили Э., Археологическая экспедиция 1918 года в Южные провинции Грузии, Тб., 1952.

[60] საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემია კ. კეკელიძის სახელობის ხელნაწერთა ინსტიტუტი, აკადემიკოს ექვთიმე თაყაიშვილის არქივი, ფონდი 663, „ტაო–კლარჯეთის გეოგრაფიული, ეთნოგრაფიული და ისტორიული მოკლე მიმოხილვა“.

[61] Анчабадзе З., Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.), Сухуми, 1959.

[62] Toumanoff C., Studies in Christian Caucasian History, Georgetown University, 1963.

[63] Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988.

[64] Տե՛ս Токарски Н., Архитектура древней Армении, Ер., 1946, Մարության Տ., Հայ ճարտարապետության հուշարձաններ, Խորագույն Հայք, Եր., 1978: Նույնի՝ Տայքի ճարտարապետական հուշարձանները, Եր., 1972:

[65] Տե՛ս Ակոպով Ա., Տայք վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի I երեսնամյակը, Եր., 2013: Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը (885-905 թթ.), (Պատմաշխարհագրական ուսումնասիրություն), Եր., 2011: Նույնի՝ Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում, «ՊԲՀ», 2008, թիվ 3: Նույնի՝ Տայքը և Կղարջքի կուրապաղատությունը IX դարում, ԲԵՀ, Հայագիտություն, 141.1, 2013: Նույնի՝ Մեծ Հայքի Տայք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի, ՎԷմ, Եր., 2014, թիվ 2: Նույնի՝ Վրաց Բագրատունիների թագավորության ձևավորման գործընթացը, Եր., 2018 և այլն:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «Տայքի պատմաաշխարհագրական և էթնո-դավանանքային պատկերը (IV դ. - XI դ. սկիզբ)», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլուխը՝ ***«««Աշխարհացոյց»-յան Տայք նահանգը»,*** վերաբերում է «Աշխարհացոյց»-յան Մեծ Հայքի Տայք նահանգի բնաաշխարհագրական պատկերին, նահանգի գավառների դասավորության վերաբերյալ «Աշխարհացոյց»-ի համառոտ ու ընդարձակ խմբագրությունների քննությանը, ինչպես նաև երկրամասի բնակավայրերի ու գավառների տեղադրությանը: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության հիմամբ Տայքի գավառները կարելի է դասավորել հետևյալ հաջորդականությամբ. նահանգի հյուսիսարևելյան սահմանում եռանկյունաձև տեղադրվում է Կող գավառը, որի երկու կողմերը սահմանակցում են Մեծ Հայքի Գուգարք նահանգի Արտահան և Այրարատ նահանգի Վանանդ գավառներին: Իսկ եռանկյունաձև գավառի արևմտյան կողմը սահմանակցում է Տայքի երեք գավառներին՝ հարավից հյուսիս ձգվելով հետևյալ հաջորդականությամբ՝ Բերդացփոր, Պարտիզացփոր և հյուսիսում Ճակատք (Ճակք): Սրանից հարավ՝ արևելքից արևմուտք ուղղությամբ տեղադրվում են Բողխա և Ազորդացփոր գավառները, որից հարավ՝ Ոքաղեն է, իսկ այս երկուսից արևմուտք նահանգի արևմտյան սահմանն է կազմում Արսեացփոր գավառը:

Երկրորդ ենթագլխում՝ ***«Էթնո-դավանանքային գործոնը և դրա փոփոխությունը Տայքում (IV դ. - XI դ. սկիզբ)»*** ներկայացվում է Տայքի էթնո-դավանանքային պատկերը հնագույն շրջանից մինչև քրիստոնեության պետական կրոն ընդունելու, ապա նաև երկրամասում քաղկեդոնականության տարածման ու արմատավորման ժամանակաշրջաններում: Աղբյուրների կցկտուր տեղեկությունների հիման վրա ներկայացվում է Տայքի եպիսկոպոսների ցանկը, որը սկսվում է Գրիգոր Լուսավորչի հաստատած եպիսկոպոսով և հասնում IX դ. վերջը, ինչով փաստվում է, որ Տայքը մշտապես եղել է Հայոց եկեղեցու անբաժան մաս՝ ունենալով իր եպիսկոպոսը: Այս ենթագլխում է տրված նաև քաղկեդոնականության տարածումը երկրամասում, որի հետևանքով վրացերենը ևս այնտեղ կիրառում գտավ: Բացի այդ, բացատրվում է նաև հայկական աղբյուրներում Տայքի բնակչությանը և տեղի իշխող վերնախավին «վրացի» տերմինով բնորոշելու պատճառները:

Երրորդ ենթագլխում՝ ***«««Տայք» երկրանունը հայկական և օտար աղբյուրներում»***, խոսվում է երկրամասի անվան ծագման ու դրա փոփոխման մասին: Եթե հայկական աղբյուրներում երկրամասը հանդիպում է հիմնականում «Տայք» ձևով, ապա վրացական, հունա-հռոմեական և, հատկապես, բյուզանդական ու արաբական աղբյուրներում այն հայտնի է տարբեր անվանումներով, որոնց մեծ մասում պահպանվում է երկրանվան հայկական արմատը: Սակայն բյուզանդական աղբյուրներում Տայքը հանդիպում է նաև «Իբերիա» անվամբ, որը պայմանավորված էր տեղի իշխող վերնախավի կողմից քաղկեդոնականության ընդունման հանգամանքով: Այսինքն՝ այն ժամանակաշրջանից, երբ Տայքի Բագրատունի իշխաններն, ընդունելով քաղկեդոնականություն, իրենք իրենց կոչում են վրացի, բյուզանդական աղբյուրները նրանց անվանում են իբերներ:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «Տայքում իշխանության ձևավորումը (IV դ. - IX դ. առաջին քսանամյակ)», բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ ***«Իշխանությունները Տայքում (IV դ. - VIII դ. կեսեր)»***, ներկայացվում է երկրամասում քաղաքական իշխանության ձևավորումը: Հատկապես Արշակունիների արքայատոհմի գոյության ժամանակաշրջանից Տայքը հայկական նշանավոր տոհմերից մեկի՝ Մամիկոնյանների տոհմական տիրույթն էր: Սակայն նահանգում գոյություն ունեին նաև այլ մանր իշխանական տներ, որոնցից էին

Դիմաքսյանները: Նրանցից բացի կային նաև տեղական մանր իշխաններ, որոնք ևս ունեին իրենց զորքը, ինչի մասին վկայում են «Գահմնամակի» ու «Զորանամակի» տեղեկությունները:

Երկրորդ ենթագլխում՝ ***«Բագրատունիների վրացական ճյուղի ծագումը»,*** խոսվում է Բագրատունիների վրացական ճյուղի ծագման մասին: Հայկական, բյուզանդական և, հատկապես, վրացական աղբյուրների տեղեկությունների քննությամբ պարզվում է նրանց ծագման իրական հիմքերը, ինչը փաստում է, որ Բագրատունիների վրացական ճյուղը սերում է հայ Բագրատունիներից: Նշվում է նաև, որ նրանց ծագման վերաբերյալ միակ հավաստի տեղեկությունները պահպանվել են հայկական աղբյուրում՝ Վարդան վարդապետի, իսկ վրացական աղբյուրներից՝ Ջուանշերի երկերում: Մնացյալ պատմիչները, գլխավորապես Դավթի որդի Սմբատը, հորինել են Բագրատունիների վրացական ճյուղի հրեական ծագման մասին վարկածը, որպեսզի թաքցնեն նրանց կապը հայ Բագրատունիների հետ: Ըստ այդ վարկածի՝ վրաց Բագրատունիների նախահայրն էր Գուարամը կամ Գուրամը, որը սերում էր հրեաների թագավոր Դավթի սերնդից, և եղել էր V-VI դդ. ապրած անձնավորություն: Սակայն քննությունը հաստատում է, որ նա որևէ կապ չուներ Բագրատունիների հետ:

Երրորդ ենթագլխում՝ ***«Բագրատունիների իշխանության հիմնումը Տայքում»***, ներկայացվում է Բագրատունիների հաստատումը Տայքում և հարևան Կղարջքում: Քննվում է նրանց՝ այդ տարածքներում հաստատվելու ժամանակն ու հանգամանքները: Պարզվում է նաև, որ Բագրատունիների տոհմից Հայոց իշխան Աշոտ Կույրի (732-748) երկու որդիների սերունդները՝ Աշոտ Մսակերն ու նրա հորեղբայր Վասակը և սրա որդի Ատրներսեհը, Բագրևանդի 774-775 թթ. ճակատամարտում արաբներից պարտություն կրելով, միևնույն ժամանակ հաստատվում են Տայքում և Կղարջքում՝ հիմք դնելով Բագրատունիների վրացական ճյուղին: Անդրադարձ է կատարվում վրացական Խոսրովյան դինաստիայի վերջին գահակալներին՝ Արչիլ II-ին ու սրա որդիներ Ջուանշերին ու Հովհանին, նրանց կառավարման թվականներին: Պարզաբանվում է, որ Վասակ ու Ատրներսեհ Բագրատունիները Տայք և Կղարջք հեռանալիս դիմել են ոչ թե Արչիլ II-ին ու բնակության տարածք ստացել, այլ՝ նրա որդի Ջուանշերին, իսկ վերջինս էլ ամուսանցել է Ատրներսեհի դուստր Լատավրիայի հետ:

Չորրորդ ենթագլուխը կրում է ***«Բագրատունիների վրացական ճյուղի իշխանության տարածքը»*** խորագիրը: Այս ենթագլխում ճշգրտվում են Աշոտ Մսակեր և Վասակ ու Ատրներսեհ Բագրատունիներին պատկանած տարածքները Տայքում և Կղարջքում: Պարզվում է, որ Տայքի հյուսիսարևմտյան գավառները՝ Ճակքն ու Արսեացփորը, մինչ VIII դ. կեսերն արդեն ընկել էին վրացական Խոսրովյան դինաստիայի տիրապետության տակ: Իսկ նահանգի մեծ մասը՝ կենտրոնական և արևելյան գավառները, շարունակում էին պատկանել Մամիկոնյաններին: Երբ 774-775 թթ. հակաարաբական ապստամբության պարտությունից հետո նրանք հեռացան պատմական ասպարեզից, դրանք գրավվեցին արաբների կողմից: Սակայն Աշոտ Մսակերը հետագայում կարողացավ տիրել ոչ միայն Շիրակին ու Աշոցքին, այլև Տայքին (խոսքը Տայքի կենտրոնական և արևելյան հատվածի մասին է): Այդ ենթագլխում խոսվում է նաև վրացական Խոսրովյան դինաստիայի անկման և Բագրատունիների վրացական ճյուղի իշխանության հաստատման մասին: Ճշգրտվում են Բագրատունի իշխաններ Վասակին ու Ատրներսեհին տրված տարածքները, որոնք սահմանափակվում էին Արտահան և Շավշեթ (Շավշք) գավառներով, ապա վերջինիս որդի Աշոտ կուրապաղատի իշխանության սահմաններն ու դրանց փոփոխությունները: Պարզվում է, որ Ջուանշեր Խոսրովունու (Խոսրովյանի) մահից հետո նրա տիրույթները,

այդ թվում Տայքի հյուսիսային ու արևմտյան գավառները, անցան Աշոտ Կուրապաղատին, որն էլ հիմք դրեց կուրապաղատների ժառանգական իշխանությանը:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ կրում է **«Տայքի իշխանությունը IX դ. 30-ական թթ. մինչև XI դ. սկիզբը»** խորագիրը և բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ ***«Տայքի իշխանությունը IX դ. 30 - 90-ական թթ.»***, ներկայացվում է Աշոտ Կուրապաղատից հետո նրա իշխանության թուլացումն ու բաժանումը երեք որդիների՝ Ատրներսեհի, Բագրատի և Գուարամի միջև, որոնցից Բագրատը ժառանգում է կուրապաղատի տիտղոսը: Այս ենթագլխում տրվում է նաև Բագրատունիների վրացական ճյուղի տրոհումը Տայքի ու Կղարջքի ճյուղերի: Ինճպես նաև նշվում, որ Աշոտ Կուրապաղատից և Աշոտ Մսակերից հետո Տայքն անցնում է Աշոտ Կուրապաղատի ավագ որդի Ատրներսեհին, որին պատկանում էր նաև Կղարջքը: Քննությունը ցույց է տալիս, որ կուրապաղատի տիտղոսը ևս նրա որդի Գուրգենինն էր: Սակայն 891 թ. Ատրներսեհ Ի-ը Գուրգենից խլում է այդ տիտղոսը և նրան ստիպում հեռանալ Տայքից: Այդպիսով Բագրատունիների Կղարջքի ճյուղը զրկվում է այդ տիտղոսից: Իսկ Ատրներսեհը Հայոց Սմբատ Ա արքայից 899 թ. ստանում է թագավորի տիտղոս և հիմք դնում Բագրատունիների վրացական ճյուղի, առավել հստակ՝ Տայքի ճյուղի թագավորական իշխանությանը:

Երկրորդ ենթագլուխը, որը վերնագրված է ***«Տայքի կուրապաղատությունը X դ. առաջին կեսին»***, վերաբերում է Ատրներսեհ Ի-ի իշխանությանը և Սմբատ Ա-ի և Բյուզանդական կայսրության հետ նրա փոխհարաբերություններին: Թեև Ատրներսեհ Ի-ը կրում էր «Վրաց թագավոր» տիտղոսը, սակայն նրա իշխանությունը չէր տարածվում բուն Վիրքի վրա, այլ սահմանափակվում էր Տայքով ու Գուգարքի մի քանի գավառներով՝ Արտահան, Ջավախք, Սամցխե և այլն: Նրա իշխանության կենտրոնը Տայքն էր, որի հարավային սահմանը հասնում էր Թեոդոսիոպոլիս (Կարին): Իշխանության հյուսիսարևելյան սահմաններն ընդարձակելու համար նա պայքարի մեջ մտավ Ափխազական պետության հետ, սակայն անհաջողության մատնվեց: Այնուամենայնիվ, Սմբատ Ա-ի իշխանության ժամանակ Ատրներսեհ Ի-ը վայելում էր նրա հովանավորությունը, իսկ նրան տրվող «Վրաց թագավոր» տիտղոսը բնորոշում էր լոկ նրա քաղկեդոնադավան լինելը:

Երրորդ ենթագլխում՝ ***«Տայքի կուրապաղատությունը Դավիթ Կուրապաղատի օրոք»***, տրվում է Տայքի կուրապաղատության ամենաազդեցիկ կառավարիչ Դավիթ Կուրապաղատի ժամանակաշրջանի պատմությունը: Այս ենթագլխում նաև քննվում է նրա տոհմական ծագումը: Վերլուծվում է նաև Դավիթ Կուրապաղատի արտաքին ու ներքին քաղաքականությունը, հատկապես բյուզանդական կայսրությունում Վարդ Սկլերոսի ու Վարդ Փոկասի ապստամբություններին նրա մասնակցության հարցը: Ցույց է տրվում, որ Դավիթը Վարդ Սկլերոսի ապստամբության ճնշման գործում աջակցել է Վասիլ II կայսրին, սակայն չի մասնակցել Վարդ Փոկասի ապստամբությանն՝ ընդդեմ Վասիլի: Պարզվում է, որ արաբ հեղինակ Յահյա Անտիոքացու տեղեկությունն առ այն, որ Կուրապաղատն աջակցելով Փոկասին և պարտվելով ստիպված էր իր տարածքները կտակել կայսրությանը, ստույգ չէ: Քննությունը փաստում է, որ նրա սպանության պատվիրատուն բյուզանդական կայսրությունն էր, որին ակտիվ մասնակցություն են ունենում նաև տեղի ավագանին, և նա սպանվում է վրաց եպիսկոպոս Իլարիոնի միջոցով: Հայկական և վրացական աղբյուրները նրա մահը թվագրում են 1000 կամ 1001 թվականներով: Իսկ մինչ այդ Դավիթ Կուրապաղատը, սերտ հարաբերություններ ունենալով Հայոց արքաներ Սմբատ Բ-ի (977-990) ու Գագիկ Ա-ի (990-1020) հետ,

ընդարձակում է Տայքի կուրապաղատության սահմանները, գրավում է նաև Մանազկերը և վտարում տեղի մահմեդական բնակչությանը: Դավթի միջնորդությամբ վրացական հողը միավորվեցին Բագրատ III–ի (978-1014) գլխավորությամբ, որ տիրում էր նաև Ափխազական պետության գահին:

Սակայն X դ. վերջերին նա իր իշխանությունը կտակեց Բյուզանդիային՝ այդպիսով արագացնելով իր մահը: Դավիթ Կուրապաղատի մահով Տայքի կուրապաղատությունը դադարեց գոյություն ունենալուց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ամփոփված են ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները:

1. Տայքը Մեծ Հայքի նահանգներից տասնչորսերորդն էր: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության տեղեկությունների հիման վրա կարելի է ճշգրիտ տեղորոշել նահանգի ութ գավառների դասավորությունը՝ սկսելով հյուսիսարևելյանից և ավարտելով արևմտյանով: Տայքի գավառների ու բնակավայրերի վերաբերյալ համառոտ տեղեկությունների ուսումնասիրմամբ վստահաբար կարելի է փաստել, որ նահանգը Մեծ Հայքի անբաժանելի մասն է, իսկ տեղի բնակիչները մինչև IX-XI դդ. եղել են գերազանցապես հայեր: Սակայն ժամանակի ընթացքում, հատկապես քաղաքական հանգամանքներով պայմանավորված, երկրամասում տարածվեց և խոր արմատներ ձգեց քաղկեդոնական դավանանքը, ինչը հանդիպում էր Տայքի հայ բնակչության դիմադրությանը: Չնայած քաղկեդոնականության տարածմանը, Տայքը մինչև IX դ. վերջը շարունակում էր մնալ Հայոց եկեղեցու թեմ՝ ունենալով իր եպիսկոպոսը: Դրանից հետո, երբ տեղի իշխող վերնախավն ընդունեց քաղկեդոնականությունը, նահանգի բնակչությունը սկսեց «վրացականացվել»: Այդուհանդերձ, մինչև XX դ. սկիզբը Տայքում շարունակում էին ապրել հայեր, ինչպես նաև պահպանվում էին հայկական գյուղեր՝ իրենց անվանումներով:

2. Դավանանքի ազդեցությունը մեծ էր ոչ միայն նահանգի մշակութային, ազգային և լեզվական նկարագրի, այլև երկրանվան փոփոխման վրա: Քաղկեդոնականության տարածմամբ պայմանավորված՝ Տայքը բյուզանդական աղբյուրներում անգամ սկսեց կոչվել «Իբերիա», իսկ հայկական աղբյուրներում՝ տեղի իշխանությունը հաճախ հանդիպում է «Վրաց» տերմինով: Այնուհանդերձ, նահանգի հայկական անվանաձևը շարունակեց պահպանվել արաբական աղբյուրներում, որոնք, անտեսելով դավանանքի գործոնը, Տայքը գրեթե մշտապես հիշում են Շիրակի հետ՝ Սիրաջ-Թայր ձևով: Իսկ հայկական «Տայք» և վրացական «Տաո» երկրանունը ծագում է Քսենոփոնի նշած երկրամասի բնակիչների՝ տաոխների անվանումից:

3. Տայքում հնագույն ժամանակաշրջանից եղել է քաղաքական ազդեցիկ իշխանություն, որի ուժը նաև նրա աշխարհագրական դիրքի և բնական անառիկության մեջ էր: Այդ նահանգը IV դ. սկսած ազդեցիկ ու կարևոր նշանակություն է ստանում Հայաստանի քաղաքական կյանքում, քանզի այն հայ նշանավոր տներից Մամիկոնյանների տոհմական տիրույթն էր: Վերջիններիս զուգահեռ Տայքում իշխում էին նաև Դիմաքսյաններն ու այլ տեղական մանր իշխաններ: Տայքում VIII դ. երկրորդ կեսից հաստատվում են հայկական մեկ այլ նշանավոր տան՝ Բագրատունիների ներկայացուցիչները, որոնց շնորհիվ էլ երկրամասի քաղաքական կշիռն ու դերը ոչ միայն հայոց, այլև վրաց պատմության մեջ ավելի բարձրացավ:

4. Հայոց իշխան Աշոտ Կույր Բագրատունու սերնդի երկու ներկայացուցիչները VIII դ. երկրորդ կեսին հաստատվելով Տայքում և հարևան Կղարջքում Բագրատունիների գլխավորությամբ հիմք դրեցին նոր իշխանության և դարձան նրանց վրացական ճյուղի

հիմադիրը: Վրացական աղբյուրները, ինչպես նաև վրացի գիտնականները փորձում են անտեսել Բագրատունիների վրացական ճյուղի ծագման իրական հիմքերը, դրանք կապելով հրեաների թագավոր Դավթի անվան հետ: Սակայն հայկական, բյուզանդական և հատկապես վրացական աղբյուրների մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ Բագրատունիների վրացական ճյուղը սերում է հայկականից և սկիզբ է առել VIII դ. վերջերին: Այսինքն՝ հավանաբար դավանանքի հիմքով վրացական աղբյուրները փորձել են անտեսել վրաց պատմության մեջ մեծագույն դերակատարություն ունեցած Բագրատունիների ծագման իրական հիմքերը, թաքցնելով հայկականի հետ կապը:

5. Բագրատունիների գլխավորությամբ Տայքում և Կղարջքում հիմնադրված իշխանությունը VIII դ. վերջերից մինչև IX դ. վերջը կոչվել է Կուրապաղատություն: Դրա պատճառը Բյուզանդիայի կայսրերի կողմից իշխանության տիրակալ Աշոտ Բագրատունուն և նրա որդիներին կուրապաղատի տիտղոս շնորհելն էր: Բագրատունիների վրացական ճյուղը IX դ. կեսերից բաժանվեց երկու մասի՝ Տայքի և Կղարջքի: Տայքի կառավարիչ Ատրներսեհ Բագրատունին 891 թ. ստացավ կուրապաղատի տիտղոս և դրանով Կղարջքի ճյուղը զրկվեց այդ տիտղոսից: Այն մնաց Տայքի ճյուղի ներկայացուցիչներին: Հայոց արքա Սմբատ Ա-ը 899 թ. թագավորի տիտղոս շնորհեց Ատրներսեհին, որը դարձավ վրաց Բագրատունիների առաջին թագավորը՝ կոչվելով Ատրներսեհ I: Այսինքն՝ այդ ժամանակից սկսած, Տայքի ճյուղը հասավ նաև թագավորական տիտղոսի, սակայն բյուզանդական կայսրության կողմից նրա կառավարիչները շարունակեցին կոչվել կուրապաղատներ: Կուրապաղատի տիտղոսը Բագրատունիների վրացական ճյուղի ներկայացուցիչների շրջանում հավասարազոր էր թագավորի տիտղոսին: Սակայն պատմագիտական գրականության մեջ Տայքի իշխանությունը մեծ մասամբ հայտնի է որպես Կուրապաղատություն, իսկ կառավարիչները՝ կուրապաղատներ:

6. Տայքի կուրապաղատությունն իր հզորության գագաթնակետին հասավ X դ. երկրորդ կեսին՝ Դավիթ Կուրապաղատի գլխավորությամբ: Վերջինս ակտիվ արտաքին և ներքին քաղաքականության շնորհիվ կարևոր դերակատարություն ստանձնեց ոչ միայն Հայոց թագավորության և Բագրատունիների վրացական մնացյալ իշխանությունների, այլև Բյուզանդական կայսրության հետ հարաբերություններում: Դավթի օժանդակությամբ կայսրությունում Վարդ Սկլերոսի ապստամբությունները ճնշվեցին: Տայքի կուրապաղատը մեծ դերակատարում ունեցավ նաև հայկական հողերից արաբական ամիրությունների ու մահմեդականների վտարման գործում: Նրա ջանքերով Կուրապաղատության սահմաններն ընդարձակվեցին դեպի հարավ՝ ընգրկելով նաև Մանազկերտը: Սակայն X դ. վերջերին Դավիթն իր տիրույթները կտակեց կայսրությանը, ինչն էլ հանգեցրեց նրա մահվանը: Բյուզանդիայի դրդմամբ Դավիթ Կուրապաղատին սպանեցին, և Տայքի կուրապաղատությունը դադարեց գոյություն ունենալուց:

Այսպիսով, Տայքի կուրապաղատությունը դատապարտված էր կիսելու հայկական այլ իշխանությունների ճակատագիրը, որոնք մեկը մյուսի հետևից ընկան Բյուզանդիայի տիրապետություն տակ: XI դ. սկզբին Դավիթ Կուրապաղատի մահից հետո կայսրությունը տեր դարձավ իր «ժառանգությանը»՝ ճանապարհ հարթելով Անիի Բագրատունյաց թագավորության նվաճման համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՇԱՐԱԴՐՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ

1. Վարդ Սկլերոսի և Վարդ Փոկասի ապստամբություններն ու Դավիթ Կուրապաղատը, «Հայոց պատմության հարցեր», N 10, Երևան, 2009, էջ 34-49:
2. Արիստակես Լաստիվերտցու մի վկայության շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2012,թիվ 4, էջ 58-69:
3. Քրիստոնեության տարածումը Վրաստանում, «Երիտասարդ պատմաբանների միջբուհական 2-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու», Երևան, 2013, էջ 75-79:
4. «Տայք» երկրանունն ըստ արաբական աղբյուրների, «Հասատանը և արաբական աշխարհը. Պատմություն և արդի խնդիրներ (Երիտասարդական միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու)», Երևան, 2014, էջ 36-42:
5. Բագրատունիների վրացական ճյուղի սկզբնավորումը, «Բանբեր Մատենադարանի», 23, Երևան, 2016, էջ 131-148 +8 նկար աղյուսակներ:
6. Основание грузинской ветви Багратидов, «Античная древность и средние века», Екатеринбург, 2016, вып. 44, стр. 87-103.
7. Քաղկեդոնականության տարածումը Տայքում, «Հայոց պատմության հարցեր», N 19, Երևան, 2018, էջ 15-28:
8. Դավիթ Կուրապաղատի տոհմաբանությունը, «Բանբեր Հայագիտության», Երևան, 2019, N1 (19), էջ 48- 54:
9. Տայքում եվ Կղարջքում Բագրատունիների վրացական ճյուղի իշխանության հաստատման թվականի շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2019, N2, էջ 211-222:

НАЗАРЯН ЛИАНА САШАЕВНА

ТАЙК IV – НАЧАЛА XI ВВ.
(ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 22-го октября 2019 г., в 14^{00} на заседании специализированного совета Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Настоящая диссертация посвящена изучению ряда историко-географических вопросов, касающихся области Тайк Великой Армении IV- начала XI вв.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы, а также приложения–родословных и карт. Во введении обоснованы актуальность и новизна темы диссертации, приведены цель и задачи, хронологические рамки, источниковая база исследования и историографический очерк.

Первая глава настоящего исследования «Историко-географический и этно-религиозный облик Тайка (IV – начала XI вв.)» посвящена как изучению местоположения провинций области в соответствии с обширной статьей «Ашхарацуйца», так и освещению подробных сведений о жителях Тайка в раннесредневековых источниках. Указанные источники свидетельствуют о том, что область до VIII в. находилась во власти Армении, а подавляющее большинство ее населения составляли армяне. Исследуется также распространение халкедонизма в области, вследствие чего местных жителей часто именовали «грузинами», что также послужило причиной переименования области в дальнейшем. На основании конфессиональной принадлежности в византийских источниках Тайк именуется Иверией, однако в арабских источниках его армянское название сохраняется. Эта глава также показывает, что распространение халкедонизма встретило сопротивление со стороны местного населения и только в VIII-IX вв. принятие халкедонизма правящей элитой Тайка привело к его укреплению в области. Однако Тайк с IV по IX вв. оставался епархией Армянской Апостольской Церкви со своим епископом.

Во второй главе «Формирование власти в Тайке (IV в. – первая четверть IX в.)» представлены основы формирования политической власти в Тайке, свидетельствующие, что область, будучи вотчиной рода Мамиконянов, была неотъемлемой частью политической жизни Великой Армении вплоть до середины VIII в., когда часть провинции перешла под контроль Грузинского государства. С конца VIII в. Тайк переходит к видной армянской династии Багратуни. Именно в это время ответвление последней, обосновавшееся в Тайке и соседнем Кларджке, положило начало грузинской ветви

Багратидов. В этой главе также освещены происхождение грузинской ветви Багратидов, время и масштабы ее возникновения.

В третьей главе «Власть в Тайке в 30-х годах IX в. – начале XI в.» приведены сведения о разделении грузинской ветви Багратидов на ветви Тайка и Кларджка, установлении царской власти и укреплении авторитета Атрнерсеха I и его потомков. В этой главе также подробно излагается история правления Давида Куропалата, его происхождение, внутренняя и внешняя политика, завещание власти Византии и другие вопросы.

В выводах обобщены основные результаты и заключения диссертации.

В Приложении к диссертации приведены генеалогическое дерево грузинской ветви Багратидов согласно исторических источников (таблица 1-8), а также одно генеалогическое дерево и две карты: «Область Тайк Большой Армении согласно «Ашхарацуйцу» и «Тайк конца VIII в. –– начала X в.», составленные соискателем.

NAZARYAN LIANA SASHA

TAYK IN THE IV C. AD – THE BEGINNING OF THE XI C.
(Historical-geographical study)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on October 22, 2019, at 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

This dissertation is related to the elucidation and study of a series of historical-geographical issues of Tayk province of Armenia Major in the period covering from the IV c. AD – the beginning of the XI c.

The dissertation is composed of an introduction, three chapters, conclusions, list of used sources and literature, appendix with family trees and maps. The introduction presents the relevance of the topic, the scientific novelty, the purpose and issues of the research, the chronological framework, the sourceological base and the studies concerning the main issue.

In the first chapter entitled "The historical-geographical and ethno-confessional image of Tayk (the IV c. AD – the beginning of the XI c.)", the disposition of the cantons of the province are examined according to the extensive editing of "Ashkharhatsoyts", as well as the scanty information of the sources of the Early Medieval Ages on the settlements and cantons of Tayk is elucidated.

Their mentioning attests that the region used to be fully within the Armenian principalities up to the VIII c. and the predominant majority of the local population was Armenian. The circumstance of spreading Chalcedonian confession and in its result calling the local population "Georgian" is given which also lies in the basis of changing the name of the region. Tayk is called also Iberia in Byzantine sources on confessional basis whereas in Arabic sources it continous to preserve the Armenian base of the name. In that chapter it is also shown that the spread of Chalcedonian faith faced the opposition of the local ordinary population and only the adoption of Chalcedonian faith by the ruling upper class in the VIII-IX cc. resulted in its strengthening in the region. However, from the IV c. AD up to the end of the IX c. it continued to remain a diocese of the Armenian Apostolic Church with its bishop.

In the second chapter entitled "The formation of principality in Tayk (the IV c. AD – the first vicennium of the IX c.)" the bases of formation of political authority in Tayk is shown, that Tayk, being a clan ownership of the Mamikonyan – one of the princely houses, was an inseparable part of the political life of Armenia Major up to the half of the VIII c. when a part of the province passed under the dominance of the Georgian state and by the end of the VIII c. it passed to one of the prominent Armenian kin – the Bagratuni. It was in that period that a branch of the latter, having settled in Tayk and neighbouring Kgharjk, laid the foundation of the Georgian branch of the Bagratuni. In this chapter the origin of the Georgian branch of the Bagratuni, the period of foundation of their principality and fiefdoms are given.

In the third chapter entitled "The principality of Tayk from the 30s of the IX c. up to the beginning of the XI c." the separation of the Georgian branch of the Bagratuni into the branches of Tayk and Kgharjk, the foundation of a kingdom and the authority of Atrnerseh I and his generations are given. In this chapter the history of the period of the principality of David Curapalates, his ancestral origin, the internal and external policy, bequeathing his principality to Byzantium and other issues are observed in detail.

In the conclusions the main provisions and results of the dissertation are summarized.

In the appendix of the dissertation the family trees of the Georgian branch of the Bagratuni based on the sources (table 1-8), as well as a family tree and two maps – "Tayk province of Armenian Major according to 'Ashkharhatsoyts'" and "Tayk from the end of the VIII c. – the first half of the X c" compiled by the dissertator are given.